

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«___» _____ 2018 թվական

N ___-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 608-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 12-ի ««Իրավաբանական անձանց պետական գրանցման և քաղաքացիական կացության ակտերի գրանցման վճարովի ծառայությունների ցանկը և վճարների չափերը հաստատելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարությանն արտաբյուջետային հաշիվ բացելու թույլտվություն տալու մասին» N 608-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածում 17-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 17.1-ին կետ.

17.1.	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի տարածքում ամուսնությունների հանդիսավոր գրանցում	10 000
-------	---	--------

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 608-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	<p align="center">Ընթացիկ իրավիճակը և անհրաժեշտությունը</p>
	<p>Ներկայումս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 12-ի N 608-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածում սահմանվում են իրավաբանական անձանց պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման և քաղաքացիական կացության ակտերի գրանցման վճարովի ծառայությունների ցանկը և վճարների չափերը:</p> <p>«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 12-ի N 608-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նոր ծառայության ներդրման միջոցով քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ցանկի ընդլայնմամբ և որակի բարելավմամբ:</p>
2.	<p align="center">Առաջարկվող կարգավորման բնույթը</p>
	<p>Նախագծով առաջարկվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 12-ի N 608-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածում լրացնել նոր՝ 17.1-ին կետ, սահմանելով «քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի տարածքում ամուսնությունների հանդիսավոր գրանցում» վճարովի ծառայության տեսակը և դրա մատուցման համար վճարվող չափը՝ 10.000 ՀՀ դրամ:</p>
3.	<p align="center">Ակնկալվող արդյունքը</p>
	<p>Նախագծի շրջանակներում նախատեսվում է ընդլայնել քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում քաղաքացիներին մատուցվող ծառայությունների տեսակները:</p>
4.	<p align="center">Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</p>
	<p>1. Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության</p>

	աշխատակազմի ՔԿԱԳ և նոտարիատի գործակալություն 2. Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժին
5.	Այլ տեղեկություններ
	Նախագիծն օրենսդրությամբ սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ